

ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱԿԱՏԱԳԻՐԸ

Լեւոն Հախվերդեան

Այս վերնագրով հայ դասական գրողներին շատերի մասին կարելի է ուսումնասիրութիւն գրել:

Պատճառն այն է, որ հայ գրողներն անբաժան են իրենց ժողովրդի ճակատագրից: Իր համեմատելին չունեցող հայոց մեծագոյնը ճակատագիրն այնպէս է մխրճուել հայ գրականութեան մէջ, որ դիմադրիչ է տուել նրան: Մեր ոսկեդարեան պատմիչները խորհնայնացուց եւ Եղիշէից, միջնադարեան տաղերգուներից մինչեւ Արտեմիան ու Բաֆֆի, մինչեւ մեր ժամանակները:

Ինչ ապա հայրենասիրական սիրտ է բարխել նրանց կրծքի տակ, որ կարծես տրոփել է միայն հայրենիքի համար: Հայրենասիրութիւնը նրանց միայն աշխարհայեցողք էր, այլ առօրեայ վարքն ու վարքագիծը, բնական վիճակը, ինչպէս շնչելը, քնել-վեր կենալը, շուր խմելը:

Այս ոսկէ շղթայում Յովհաննէս Թումանեանը բացառիկ տեղ է գրաւում, աւելի, քան մենք պատկերացնում ենք: Բացառիկ՝ ե՛ւ անձնական կեանքով, ե՛ւ ստեղծագործութեամբ: Պատանեկութիւնից մինչեւ իր անագորոյն մահը:

Բաֆֆու կեանքի վերջին ամիսներին (վիպասանը վախճանուել է 1888-ի ապրիլի 25-ին) Թումանեանը եղել է նրա տանը: Եղել է նաեւ Վարդան (Ալեքսանդր) Գոլոշեանը՝ դարավերջի հայ ազատագրական պայքարի առաջին հերոսներից ու նահատակներից մէկը: Կարելի է կռահել, թէ վիպագիրն ինչ ազդեցութիւն է գործել «Խենթի» ու «Կայծերը» կարդացող երիտասարդների վրայ:

Գոլոշեանն իր ընկերներով պէտք է մեկնէր Արեւմտեան Հայաստան իր գա-

ղափարները գէնքը ձեռքին ի կատար ածելու համար: Թումանեանը պէտք է միանար նրա խմբին, նոյնիսկ ատրճանակ է ձեռք բերել: Բայց դրան խանգարել է ծանր հիւանդութիւնը, այն աստիճան, որ Տէր-Թադեւոսը հիւանդ որդուն տարել է Դսեղ: Գոլոշեանը Թիֆլիսից մեկնել է 1888-ի յուլիսին, իսկ յաջորդ տարուայ մայիսին Թիֆլիս է հասնում նրա եւ ընկերոջ գոհուելու լուրը: Լէոն իր «Անցեալից» գրքում մտաբերել է. «Այդ լուրը տարածուած էր ամէն տեղ, հիացմունք ու խանդավառանք էր պատճառում հայ շրջաններին: Նահատակներ... Այսպէս էին մեծարուած երկու ընկածները»:

Որ 1880-ականների սկզբից արդէն Թումանեանը համակուած էր ազգային վշտով եւ ազգային ազատագրութեան գաղափարներով՝ պարզ երեւում է իր առաջին իսկ անկատար ոտանաւորներից: «Օրորք» ոտանաւորում (1882) մայրն այսպէս է խօսում քնած մանկան հետ.

ՔՈՒՆ, քՈՒՆ, իմ որդի,
Աչքերդ խուփ, չը բացաս,
Որ քո թշուառ հայ ազգի
Դառն ցաւերը չտեսնաս:

Եւ սա գրել է Ջալալօղլու դպրոցի 13-ամեայ պատանին: Յաջորդ տարին նա նախատինք է կարդում հայ վաճառականին.

Քեզ ի՞նչ փոյթ, ասա, թէ խեղճ վաճեցից
Հեծում է սոված, տուճ ու տեղ թողած...

Եւ մի տարի, եւ արդէն Թիֆլիսաբնակ պատանին այսպէս է դիմում հայրենիքին.

Ինչո՞ւ ես տխուր,
Թշուառ Հայաստան,
Է՞ր է վիզդ ծուռ,
Մայր իմ սիրական.

Խոցալից սրտով մայր իմ Հայաստան:

Այս ոտանաւորը գրելիս՝ 1884-ին, Թումանեանը Ներսիսեան դպրոցի երկրորդ դասարանի 15-ամեայ աշակերտն էր: Երկու տարի անց՝ 1886-ին, չորրորդ դասարանը չաւարտած, նա լքում է դպրոցն ու այլեւս որեւէ դպրոցում չի ուսանում:

Սա Թումանեանի մեծ զարմանքներից մէկն է. ե՞րբ, ինչպէ՞ս, ի՞նչ հնարով ու հունարով նա կարողացաւ ամբարել այնքան պատմաբանական գիտելիքներ, դրաբարն ու ուղտաց լեզուն էլ հետը, որ զարմացրել է ժամանակակիցներին եւ հիմա էլ մեզ է զարմացնում:

Սա գաղտնիք է ու գաղտնիք էլ կը մնայ: Հանճարեղ մարդու գաղտնիք: Մի բան անկասկած է, որ վերնատան պարապմունքներն այստեղ անփոխարինելի դեր են խաղացել: Վալերի Բրիւսովի նման լրջախոհ մարդը երեւոյթը բացատրել է Թումանեանին «աւտոգրիպակտ» (ինքն իրեն կրթած մարդ) կոչելով: Անգլիացիները դրա համար մի յատուկ բառ էլ ունեն՝ «ինքն իրեն պատրաստած մարդ» բովանդակութեամբ:

Բայց ինչո՞ւ հեռուները գնանք, Աւետիք Իսահակեանի մտաբերմամբ Թումանեանն ինքն է ասել. «Իր եղջիւրները պախրան ինքը պիտի շինէ»:

Բայց կարծեմ ես շեղում եմ բուն նիւթից, որ կոչւում է «Թումանեանը եւ հայոց պատմական ճակատագիրը»: Ուստի եւ դառնանք բուն նիւթին, սակայն ոչ այնպիսի մանրամասնութեամբ, ինչպէս սկսեցի: Այդպէս սկսելն իր պատճառն ունի. ամէն բանում էլ կարեւորն

առաջին քայլն է՝ «ամենաերկար ճանապարհն անգամ սկսում է առաջին քայլից» չինական ասացուածքի տրամաբանութեամբ:

Պատանի Թումանեանն արեց այդ առաջին քայլը. իր ամբողջ ներաշխարհով կապուեց հայոց պատմական ճակատագրին այլեւս երբէք չբաժանուելու համար: Բայց դա գաղափարական յաղթանակ էր եւ ոչ արուեստի: Իր առաջին հայրենասիրական ոտանաւորները շատ էին անկատար արուեստի յաղթանակ համարուելու համար:

Արուեստի ու գաղափարի, մտքի ու յուզմունքի գեղարուեստական կատարեալ յաղթանակները եկան յետոյ, յաջորդ դարի սկզբին՝ 1902-ին: Եկան ոչ միայն նորաստեղծ «Անուշով», «Թմկաբերդի առումով», «Փարվանայով», այլեւ՝ «ազգային պատմական ճակատագրի բանաստեղծական այնպիսի համարժէքներով, ինչպէս «Լուսաւորչի կանթեղը» աւանդութիւնն է, «Հայոց վիշտը», «Հայոց լեռնեթիւնն է, «Սարում» բանաստեղծութիւններն են, «Սասունցի Դաւիթ» պոեմն է:

Պախրան արդէն շինել էր իր եղջիւրները եւ կանգնել հասակով մէկ՝ շքեղ ու սիգապանծ: Նա արդէն մեր իմացած Թումանեանն էր իր այն գործերով, որոնց մասին Իսահակեանն ասել է, թէ դրանք «կազմում են մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը»:

1902-ի «Աբասթուանի աշնան» այն հրավառութիւնն այլեւս չկրկնուեց, որովհետեւ 1902 թուականն էլ իր ազգային եւ միջազգային բարենպաստ հանգամանքներով մնաց անկրկնելի: Կայ մի օրինակափոխութիւն. նրա ստեղծագործական ոգու բռնկումները պայմանաւորուել են ազգային կեանքի լաւ պայմաններով:

յանկարծազաս ազատութեան մեղրամիսը (չնայած 1909-ի ապրիլի 30 հազար զոհ տուած Ազանայի (Կիլիկիա) ջարդերին): Բայց դա կարող էր մոլորեցնել ու արբեցնել պոլսահայութեանը, բայց ոչ թուամանեանին, որի աչքում միապետական Ռուսաստանն անհունորէն աւելի գերադասելի էր սահմանադրական թուրքիայից:

Նա այսպէս էր հասկանում Ռուսաստանի եւ թուրքիայի հակադիր դերերը հայոց պատմական ճակատագրում: Նա այդ համոզումն էր պաշտպանում իր հրապարակախօսական բազմաթիւ յօդուածներում, իսկ 1910-ական թուականներին նա այդպիսի յօդուածներ աւելի շատ գրեց, քան որեւէ ազգային գործիչ:

Նոյն այս տասը տարիներին նա անհասանջ մասնակիցն էր իր ժողովրդի կեցութեան բոլոր դժուարին շրջափուլերին կա՛մ գրչով, կա՛մ գործով, աւելի ճիշտ ե՛ւ մէկով, ե՛ւ միւսով:

Հայ ժողովրդին եւ նրա բանաստեղծին սպասում էին զարհուրելի տարիներ, աւելի զարհուրելի, քան կարող էր կուսակցի ամենամուռ յոռետեսն անգամ:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսուեց 1914-ի յուլիսի 28-ին: Օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ յայտարարեց Ռուսաստանին:

Թուրքիան պատերազմի մէջ մտաւ հոկտեմբերի 29-ին ընդդէմ Անտանտի, որի մէջ էր Ռուսաստանը: Կան պատմութեան մասնագէտներ, որոնց կարծիքով թուրքիան պատերազմի մէջ մտաւ հայոց մեծ եղեռնն իրագործելու թաքուն նպատակով. դրա համար պէտք էր յատուկ իրադրութիւն, եւ պատերազմականից աւելի յարմարը չէր կարելի յօրինել: Տողերի գրողը համամիտ է այդ կարծիքին:

Դեռ պատերազմից շատ առաջ, 1913-ի յունուարին, «Հայոց հարցն ու իր լու-

ծումը» յօդուածում թուամանեանը գրել էր. «Եւ նա՛ թուրքիան, դիմել է, դիմում է եւ կը դիմի ամենահրեշտաւոր միջոցներով՝ վերջ դնելու էր ժողովրդին իր հարցի հետ միասին, հայի հայրենիքի ու ազգային իրաւունքների խնդիրը միանգամ ընդմիջտ փակելու համար»:

Ի խորին դժբախտութիւն հայ ժողովրդի՝ այդպէս էլ եղաւ:

Թուամանեանն այն սակաւաթիւ գործիչներից էր, որ եղաւ ռազմաճակատում: 1914-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մի քանի ընկերակից գործիչների հետ շրջեց պատերազմի վայրերում: Տարուայ վերջին օրերին տուն վերադարձաւ, Նուարդ դասեր վկայութեամբ՝ «ծանր տրամադրութեամբ, զարհուրելի տպաւորութիւններով»: 1915-ի ապրիլին թիֆլիս հասաւ կոտորածի բօթը: Առաջին գործը, որին ձեռնամուխ եղաւ թուամանեանը, Հայոց գրողների ընկերութեան կոչը գրելը, հրապարակել եւ աշխարհի տարբեր երկրների գրողներին ու խմբագրութիւններին առաքելն էր: Կոչն աւարտուում էր այսպէս. «Հայոց գրողների ընկերութիւնը, այս ահաւոր ճգնաժամին, դիմում է ազգերի խղճմտանքին ի դէմս նրանց լուսաւոր հաստատութիւնների ու լաւագոյն զաւակների, խնդրում է բարձրացնելու իրենց ազդու ձայնը այս անօրինակ ոճրի հանդէպ յանուն մարդասիրութեան, զրիստոնէութեան եւ կուլտուրայի»:

Հեռուից հեռու կարելի է տեսնել այս կոչը գրողի ու ստորագրողի հոգեկան վիճակը: Այն էլ պիտի պատկերացնել, թէ նա ի՞նչ հրճուանք պիտի ապրէր առնելով այն լուրը, թէ մայիսի 6-ին ռուսաց զօրքերը հայ կամաւորների հետ միասին գրաւել են Վանը: Բռնկոււն բնաւորութիւն՝ նա այնքան է ոգեւորուում, որ գրում եւ մայիսի 10-ին հրապարակում է

«Վան ու Երեւան» յօդուածը: Մեծ լաւատեսն այնպէս էր մտածում, թէ ամէն ինչ վճռուեց արդէն յօգուտ հայութեան. «Փա՛ռք ու պարծանք ռուսաց մեծ ազգին ու իր յաղթական զաւակներին, փա՛ռք ու պարծանք մեր քաջարի կամաւոր խմբերին ու յաւերժական հանգիստ ընկածներին ու նահատակներին, որ իրենց մահով իրենցից յետոյ ապրողների հանգիստը, մարդավայել կեանքն ու մարդկային պատիւն ապահովեցին»:

Կոչն ու յօդուածը բաւական չէին, նա պէտք է անձամբ լինէր Վանում, իր աչքով տեսնէր, թէ այնտեղ ինչ է կատարուում, ժողովրդի հետ ապրէր ազատութեան հրճուանքը: Եւ յունիսի 12-ից մինչեւ ամսուայ վերջը նա լինում է Վանում: Նկարիչ Փանոս Թերլեմեզեանի հետ շրջում է Վանում ու շրջակայքում եւ ասում նկարչին. «Ա՛յ տղա, էս ոնց էր, որ մինչեւ հիմա էս աննման երկիրը չէինք տեսել»: Ազատագրուած Վանը ցնծութեամբ է ընդունում բանաստեղծին (այս օրերին է, որ Գուրգէն Մահարին եւ Աղասի Խանջեանը տեսնում են թումանեանին ընթացող կառքի մէջ):

Հանդիպումներից մէկի ժամանակ՝ երիտասարդութեան կազմակերպած պատուոյ թեյասեղանին (յունիսի 18) նա կարդում է հէնց Վանում գրած «Շուռ է գալիս ծանր քարը...» բանաստեղծութիւնը, որ շնչում է նոյնպիսի անստուեր լաւատեսութեամբ, ինչ որ թիֆլիսում գրած «Վան ու Երեւան» յօդուածը:

Որքա՛ն շքեղ, հոգեպարար, բայց եւ միամիտ լաւատեսութիւն... Դրանից հազիւ մի ամիս եւ հինգ օր էր անցել, երբ յուլիսի 23-ին թիֆլիսի մօտակայ ամառանոցում հիւժուած, հիւանդ թումանեանին է հասնում ծանր բօթը՝ Վանը յանձնուել է թշնամուն, եւ ծովածաւալ գաղ-

թականութիւնը բռնել է Իգդիրի ու էջմիածնի ճամփան:

Այս հարուածին առողջութիւն կը դիմանար, այն էլ թումանեանի հիւժուած առողջութիւնը: Բայց նա թումանեանը չէր լինի, եթէ մնար ամառանոցում:

Նա պէտք է լինէր այնտեղ, ուր ժողովուրդը զգում էր իր կարիքը:

Եւ յուլիսի 30-ին թումանեանն արդէն էջմիածնում էր: Թէ ինչ է արել նա գաղթականութեան ու որբերի մէջ՝ ես չէ, որ պէտք է պատմեմ: Աւելի վառ ու տպաւորիչ պատմում են թումանեանի «էջմիածնում» ծոցատետրային գրառումները, «Յիշողութիւններ էջմիածնի որբանոցից» հրապարակումը, Ջապէլ Եսայեանոցից՝ նին գրած նամակը, Վահան Թոթովենցի, Նուարդ Եգիբեան-Բաղդասարեանի, Նուարդ Թումանեանի յուշերը: Ես միայն Նուարդ Թումանեանի կ'անեմ բանաստեղծի երկու մէջբերում կ'անեմ բանաստեղծի գրառումներից.

Մեկը՝ «Յուլիսի 30. էջմիածին. երէկ իրիկուն եկանք - գիշերը: Ամբողջ ճամփի շուրջը լիքն էին. կամ քնած կամ կրակների առջեւ նստած: Լուռ, տեղ-տեղ տնքում, են տեղ-տեղ լաց են լինում.

-Որն է էջմիածնի ճամփէն:

Ջուր չկայ: Շատախցի երեխան ու ընտանիքը: էջմիածին - լիքը:

Առաւօտը - լիքը ամէն տեղ: Ժխոր, լաց, խնդիր, հառաչանք, սուգ-Մով -

Մէջտեղը դողանջում են էջմիածնի զանգերը - լայնածաւալ հառաչանքի նման - ես երբէք էսքան տխուր չեմ լսել էջմիածնի զանգերի ձէնը - ո՛ւր, մինչեւ ո՛ւր են հասնում արդեօք էս հառաչանքն ու կոծը»:

Միւսը՝ «Գեղեցիկներ...

Մծի երեխաներ...

Անվերջ, անվերջ. մի ծանր ու ան-

վերջ հառաչանքով էջմիածնից ձգուած են մինչեւ վան... Իջնում են Ջինգիլի բարձրութիւնից, Մասիսի թիկունքից անցնում են Արաքսի կամուրջով...

Ես աշխատում եմ չնայել Արաքսին ու Մասիսին... Բայց այնուամենայնիւ նայեցի մի անհասկանալի երկիւղով -

Մասիսի գլուխը ծածկուած էր ամպերի տակ -

Արաքսը ձէն չէր հանում - չէր որոտում -

Ծանր ու խոր թշուառ էր...

Իգիւղ - մեր շատ համակրելի վարդանը յոգնած մրափի մէջ էր -

Անդրանիկը - դուրսը իր խմբի մնացորդը - ինքը ներսը խորտակուած ու յուսահատուած...»

Յուզմունքից մատներս դողում են այս տողերը արտագրելիս: Հապա ի՞նչ ապրումներ կ'ունենար ամիսուկէս առաջ վանի ազատագրութեան ցնծութեանը մասնակից եղած բանաստեղծն այս տողերը գրելիս:

Յուսալքումն այնքան մեծ է, որքան մեծ են եղել յոյսերը: Յուսալքում եւ յուսախաբութիւն հայոց ճակատագրից, աշխարհից, ամէն ինչից:

Էջմիածնում թումանեանը գլխաւորել է գաղթականներին ու որբերին ապաստան տալու, խնամելու գործը: Ուժերի գերագոյն լարում պահանջող գործ Արարատեան դաշտի ամենաշոգ ամիսներին:

Այս ամբողջ ընթացքում ազգային ողբերգութեան այս վիթխարի համայնապատկերում եղել է ժպիտ յարուցող մի, միայն մի դրուագ: Դա կապուած է այն իրողութեան հետ, թէ ինչպէս է թումանեանն իրեն կոչել «Ամենայն Հայոց բանաստեղծ», մի եզակի պատուանուն, որ հետագայում տարածուեց ու դարձաւ իր սեփականութիւնը: Թումանեանի համեմատութիւնը խնայելու համար ասենք, որ դա կատարուել է ակամայ, միանգամայն անմտադիր: Թէ ինչպէս՝ իր յուշերում պատմել է Նուարդը, որ հայրիկի հետ խնամում էր որբերին: Ու թէեւ մի քիչ երկար կը լինի՝ մէջբերումը պէտք է անեմ՝ այնքան վառ ու պատկերաւոր է դա.

«Օգոստոսի 19-ի գիշերն էր: Արարատեան դաշտի անմոռանալի, ծանր գիշերը...

Փոթորիկ, կայծակ, որոտ... Երկինքը յանկարծ մթնեց, սեւակնեց, սեւ մութ ամպերով ծածկուեց ու սկսուեց յորդանձրելը: Գաղթականութիւնը բաց երկնքի տակ էր:

Հայրիկը սեւ թիկնոցով, կեպին գլխին, շտապ դուրս եկաւ իր սենեակից՝ գաղթականութեանը շէնքերում պատուարելու: Առաջին հերթին նա նկատի ունէր վեհարանի նոր, կիսաւարտ շէնքը, որ կաթողիկոսը մերժել էր գաղթականութեանը յատկացնել: Հայրիկը զայրացած էր: Հակառակ կաթողիկոսի արգելքին, նա գաղթականութեանը տարաւ դէպի նոր վեհարանի շէնքը:

Ուսանողները՝ Լեւոն Լիսիցեանը, Լեալեա Աճեմեանը, Ալեքսանդր Բարխուդարեանը ջահերով (երկար փայտէ ձողերի ծայրին աթար էին ամրացրել, վրան նաւթ էին ածել ու վառել) գնում էին հայրիկի երկու կողմերից ու լուսաւորում էին նրա ճանապարհը:

Հայրիկը թիկնոցի մէջ փաթաթուած, տեղատարափ անձրեւի տակ առաջ էր գնում, նրան հետեւում էին հազարաւոր գաղթականութիւնը իրենց կապոցներով, երեսներով, նոյնիսկ հարազատների դիակներով... Սարսափելի տեսարան էր...

Այդ միջոցին հայրիկը յիշեցնում էր «Աղաւնու վանքի» հայր Օհանին...

Ամենայն Հայոց կաթողիկոսին դուր

չէր եկել, որ հայրիկը կառուցուող վեհարանը դարձրել էր գաղթականների ապաստան: Հետեւեալ օրը կանչում է իր մօտ բացատրութեան այդ ինքնակամ արարքի համար. չէ՛ որ ինքն արգելել էր: Հայրիկի բացատրութիւնը չի գոհացնում կաթողիկոսին, եւ նա զայրացած յիշեցնում է՝ «Դուք գիտէ՞ք, որ ես Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ», հայրիկն էլ պատասխանում է՝ «Գիտէ՞ք, որ ես էլ Ամենայն Հայոց բանաստեղծն եմ»!:

Ինձ հիացմունք եւ ժպիտ է պարգեւում այս պատասխանը: Հիացնում է նաեւ այն գեղեցիկ, լաւ գտնուած համեմատութիւնը, որ Նուարդն արել է թումանեանի եւ «Աղաւնու վանքի» հայր Օհանի միջեւ:

Տառապալից մաքառում է եղել բանաստեղծի գործունէութիւնն էջմիածնում: Զուր չէ, որ Լէոն գրել է. «Յովհաննէս Թումանեանն այդ դժոխքի մէջ է գործում է, բարեբախտաբար չի գժուում»:

Չի գժուում, բայց ահա թէ ինչ օրի է ընկնում: Դա ոչ ոք չի կարող ներկայացնել այնպէս, ինչպէս ինքն է արել մտերիմ գրող Զապէլ Նսայեանին գրած նամակում: Ուրեմն թող թոյլ տրուի այս մէջբերումն էլ անել. «...մի ծանր թախիծ ճնշում է սիրտս շարունակ: Շատ բան է խորտակուել ինձ համար աշխարհում, եւ աշխարհքը շատ ցաւերով է լցուած արդէն: Շատ բան կայ, որ էլ չեմ սիրում, արդէն: Շատ բան կայ, որ էլ չեմ սիրում, բաներ էլ կան, որ սիրում եմ, բայց տեսնել չեմ կարող: Օրինակ, էն օրուանից յետոյ, որ տեսայ մօրս՝ սպանուած եղբօրս դիակի վրայ, եւ միւս սպանուած եղբօրս (սպային) էլ թաքցրինք, որ նա չիմանայ, այլեւս չեմ կարողանում տեսնել նրան՝ իմ մօրը»:

Անցեալ տարի, էս ժամանակ, էջմիածին էի: Անկարելի է պատմել, թէ ինչ էր

էջմիածինը անցեալ տարի էս ժամանակ: Բայց ամիս ու կէս մնացի, զբաղուած էի գլխաւորապէս որբերով, եւ, յիրաւի, էն ժամանակ էլ ես եւ տեսնում էի, եւ զգում էի դժբախտութեան ու թշուառութեան ահռելիութիւնը, բայց միայն հեռանալուց յետոյ, մանաւանդ այժմ է, որ չեմ կարողանում նրանց տեսնել, ինչպէս եւ գաղթականներին առհասարակ, բայց մանաւանդ նրանց - որբերին:

Տեսնելու համար հսկայական ուժ է հարկաւոր, իսկ ես, ինչպէս արդէն գրեցի, շատ եմ ջարդուած, յոգնած ու տկար:

Իհարկէ, կարող էի շատ ուրիշ բառեր էլ գրել, թերեւս աւելի խոր ու խոշոր, որ էլ գրել, թէ յիրաւի չնայած իմ անստեսնեք, թէ յիրաւի չնայած իմ անսպառ լաւատեսութեանը եւ բնաւորուպառ լաւարթութեանը, թախիծը, որ աթեան գուարթութեանը, թախիծը, որ ստում եմ, իրական է ու, աւա՛ղ, մշտական, անանց»:

Այսպէս թումանեանի հուշակաւոր ժպիտը սրբուեց նրա լոյս երեսից: Անհոգ ծիծաղի, «Սուտիկ որսկանի» եւ «Գոչատ աղուեսի» հեղինակը չկար այլեւս:

Բայց դեռ ինչե՛ր պիտի անէր նա յանուն իր ժողովրդի:

Եւ անում էր, արեց: Հէնց այս տրտմալի նամակից ամիսներ առաջ ստիպուած էր գրել. «Աղէտ է, ոչ թէ քաղաքականութիւն» յօդուածը՝ ապացուցելու համար ի՞նչ: Այն, որ հայպացուցելու համար աշխարհում, եւ կիւրուր ժողովուրդ չեն Անդրկովկասում, որ կոտորածից փախուստ տուող հայութիւնն իր կամքով չէ, որ գաղթում է կովկաս՝ երկիրը լցնելու, գրաւելու հատէ կովկաս՝ երկիրը լցնելու, գրաւելու հատէ կարող: Օրինակ, էն օրուանից յետոյ, որ տեսայ մօրս՝ սպանուած եղբօրս դիակի վրայ, եւ միւս սպանուած եղբօրս (սպային) էլ թաքցրինք, որ նա չիմանայ, այլեւս չեմ կարողանում տեսնել նրան՝ իմ մօրը»:

մէկին խնդրել էր, որ իր յորելեանի մասին խօսք չլինի, «...երբ առանց էն էլ ամէնքս շատ ենք ցաւած, իսկ ես անչափ շատ»: Բայց անկախ իր կամքից, հակառակ իր կամքի կատարուեց նախորդը չունեցած մի համաժողովրդական տարերային յորելեան, որ տեւեց երկու ամիս: Դա պէտք էր ոչ թէ յորելեարին, այլ ժողովրդին: Ուխտագնացութիւն է կատարուել դէպի Սուրյակ թաղամասի Համբարձման փողոցի N 18 տունը: Հիւժուած էր «քեֆի ու հանճարի անկրկնելի զուգորդումը» (Վ. Բրիւսով): Եւ նա ժողովրդին ողջունել է պատշգամբից: Շատ, չափազանց շատ են եղել տարբեր ազգերի լրագրային արձագանքները: Այս բոլորից մէջբերեմ մէկը, որ ամենից լաւ է բռնում մեր յօդուածի բովանդակութեանը: Սա առնուած է որբերի «Փարոս» թերթից. «Որբերի, փոքրիկ, բախտահալած որբերի պաշտպանն ու գուրգուրացողը՝ Յովհաննէս Թումանեանը, ահա թէ ինչու համար մենք, որբերս, նրան անուանում ենք «մեր բանաստեղծ հայրիկը» եւ նրան սեփականութիւնն ենք դարձնում»:

Մի մէջբերում էլ կուզենայի Թումանեանի մտերիմ ուսու բանաստեղծ Սերգեյ Գորոզեցկու յօդուածից անել. «Այժմ արդէն հասել է այն պահը, երբ նրա ամէն մի խօսքը ազգային սեփականութիւնն է»:

Որքան մեծանում էր Թումանեանի հեղինակութիւնը, այնքան շատանում էին պարտականութիւնները, իրար վրայ դարսւում նրա նիհար ուսերին:

Կարելի՞ է պատկերացնել, որ, նա միաժամանակ այսքան խորհուրդներ ու յանձնաժողովներ է գլխաւորել՝

«Հայրենակցական միութիւնների միութիւն», «Պատերազմից վնասուածներին օժանդակող ընկերութիւն», «Որբերի եւ

գաղթականների օգնութեան հանգանակիչ կոմիտէ», «Հայերի կրած վնասների քննիչ յանձնաժողով», «Արեւելեան ժողովուրդների միութիւն»...

Չափազանց շատ է՞ մի մարդու համար:

Բայց եկող ու անցնող ժամանակները ոչ թէ թեթեւացնում, այլ աւելացնում էին այդ մարդու մտահոգութիւնները:

1920-ի դեկտեմբերի 2-ին (ոչ թէ նոյեմբերի 29-ին) Հայաստանը խորհրդայնացաւ:

Թումանեանը, իմանալով բոլշեւիկների դաժանաբարոյ սովորութիւնը, փորձում է կանխել ազգային նոր դժբախտութիւնը, դիմում է Հայաստանի նորայայտ իշխանաւորներին. «Հայաստանի Ռեւոլյուցիոնար գիտեմալով, որ նրանք նոյնքան հեշտ դաշնակցական են եղել երէկ, ինչքան հեշտ կոմունիստ են դարձել էսօր՝ լուրջ նշանակութիւն չպիտի տայ նրանց դաշնակցական լինելու հանգամանքին եւ ընթացք չպիտի տայ էդ դաւերին, որ կարող են ծաւալուել եւ դառնալ համատարած չարիք»:

Բայց սրան յաջորդեց է՛լ աւելի ահաւորը. չդիմանալով բոլշեւիկեան բռնութիւններին՝ գիւղացիները 1921-ի փետրուարին Հայաստանի տարբեր շրջաններում խռովութիւն բարձրացրին: Դաշնակցութիւնն անցաւ ապստամբութեան գլուխը եւ գրաւեց Երեւանը: Տեսնելով, թէ ինչ նոր պատուհաս է գալիս ժողովրդի գլխին, Թումանեանը բողոքեց դրա դէմ: Յետոյ էլ, եղբայրասպան կռիւների առջն առնելու համար, անցաւ ռազմաճակատի գիծը ու հասաւ Երեւան:

Մեծ Վշտաւորն այնտեղ էր, ուր ժողովուրդը զգում էր իր կարիքը:

Անցաւ այս պատուհասն էլ, ապրիլի 2-ին իշխանութիւնը նորից անցաւ բոլշե-

ւիկների ձեռքը: Բայց դրանով չաւարտուեցին Թումանեանի հոգսերն ու դեգերումները:

Հէնց նոյն 1921-ի աշնանը, Ալեքսանդր Մեասնիկեանի հրաւերով, Թումանեանը դարձեալ մեկնեց Երեւան: Այս անգամ՝ Հայաստանի Օգնութեան կոմիտէ (ՀՕԿ) հիմնադրելու գործով: Հիմնադիր ժողովը կոմիտէի նախագահ է առաջադրում Թումանեանին եւ հանդիպում նրա առարկութեանը: «Դրանից յետոյ, - մտաբերել է Լէոն, - Երեւանի փողոցներով անցնելիս ահանատես եղանք ահաւոր տեսարանների: Յաջորդ նիստին գրողը յայտարարել է, թէ երբ մի ժողովուրդ սովամահ է լինում փողոցներում, պէտք է թողնել ամէն բան եւ գնալ նրան փրկելու»:

Թումանեանը դարձաւ Հայաստանի Օգնութեան կոմիտէի նախագահը: Սա վերջին պաշտօնն էր, որ նա յանձն առավ յանուն իր ժողովրդի: Եւ նա էլ գրեց կոմիտէի կոչը, որ իր լայն շնչով, խորախորհուրդ պատգամներով այսօր էլ հնչում է իբրեւ համազգային ղօղանջ, իբրեւ հեղինակի նուիրական կտակն իր ժողովրդին:

Նոյն 1921-ի հոկտեմբերի վերջին նա այդ կոմիտէի գործերով մեկնում է Պոլիս: Այստեղ գտնուելու շուրջ մէկ ու կէս ամսուայ ընթացքում նա ազգանուէր գործեր է արել, որ իրենց յուշերում ներկայացրել են Մկրտիչ Զանանը, Անայիսը, ամենից մանրամասն՝ Յակոբ Սիրունին («Բարի շունչը, զոր մեզ բերաւ Թումանեան»):

Սա վերջին գործն էր, որ Թումանեանը հասցրեց անել իր ժողովրդի համար:

Մեծ Վշտաւորը Պոլսի մտաւորականներին հմայել է իր վայելչութեամբ, խօսք ու զրոյցով: Մտերիմ հանդիպումներ է

ունեցել իր տարեկից ու սրտակից Երուանդ Օտեանի հետ եւ ամենից շատ նրան է հաւանել: Իսկ իրեն էլ ամենից շատ բանաստեղծուհի Անայիսն է հաւանել («...երբ սրահին դուռը բացուեցաւ, ու ծանուցին իր անունը, սիրտս ոստումը ունեցաւ: Սեւեր. հագած, բարեվայել մը ունեցաւ: Սեւեր. հագած, բարեվայել մը, նրբամարմին, ալեծաղիկ գլխով, յոյժ ազնուական, վերջին ծայր համակրելի, քերթողը քաղցր ժպիտով մը ձեռքը ինձ երկարեց»):

Պոլսահայ մտաւորականներից ոչ մէկը չէր կարող իմանալ, թէ ինչ է կատարուում Մեծ Վշտաւորի հոգու խորտարուում: Իմացաւ միայն Աւետիք Իսահակեանը, որ Վենետիկում ստացաւ Պոլսից, կեանք, որ Վենետիկում ստացաւ Պոլսից, դեկտեմբերի 9-ին աւագ ընկերոջ գրած նամակը, որի մէջ այսպիսի դառնաշունչ, նամակը, որի մէջ այսպիսի դառնաշունչ, նամակը խօսքեր. «Ես չեմ ուզում՝ եւ չեմ կարող երկար ու բարակ գրել մեր երկրից, թէեւ դու հարցնում ես: Կարճ անեմ. մենք թէ՛ դրսից, թէ՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխաւորապէս մենք: Մե՞ք եմ ասում, եւ սրա մէջն է ճշմարտութիւնը: Մի մասը խաչագող ճշմարտութիւնը: Մի մասը գողեր ու աւազակ-սրիկաներ, մի մասը գողեր ու աւազակներ, մի մասը ապիկար թշուառականներ, ներ, մի մասը ապիկար թշուառականներ, եւ չերեւաց մի բազմութիւն, գոնէ մի խմբակ, որ վերածնունդ երկրի շունչն ու բարոյական կարողութիւնը յայտնաբերէր: Էսքան աղէտների ու պարտութիւնների էսքան ո՛չ մի մեղաւոր չերեւաց, ո՛չ ոք ոչ պատասխանի կանչուեց, ոչ պատասխան տուեց: Եւ շարունակուում է. այժմ էլ նոյն մարդիկը, նոյն ճանապարհներով...

Եւ ոչ մէկը գոնէ անձնասպան չեղաւ, որ ապացուցանէր, թէ գոնէ ամօթ ու խղճմտանք կայ էս մարդկանց մէջ կամ ժողովրդի մէջ: Բայց ես ի՞նչ եմ ասում - չկարողացան գոնէ վշտանալ կամ վշտացած երեւալ»:

զինք...»:

Ես մի տեղ կարդացել եմ, որ քաղց-
կեղը գոյանում է մարդու ծանրագին ապ-
րումներից, անփարատելի վշտերից: Ես
հաւատում եմ բժշկական այդ տեսութեա-
նը:

Չիմանալով իր հիւանդութեան անու-
նը՝ Մեծ Վշտաւորն իզուր էր դժգոհում
իր այնքան հմուտ ու հոգատար բժիշկնե-
րից, նաեւ իր սիրելի ընկեր ու զրուցա-
կից Գրիգոր Սաղեանից: Վիճակն անյու-
սալի էր: Բայց եւ այնպէս 1922-ին նա
հասցրեց երկու հանդիմանում ունենալ
տիեզերական ոլորտներում:

Երկուսն էլ սքանչելի:

Մեկը «Միրիուսի հրաժեշտն» է,
գրուած յունիսին, որ աւարտում է հե-
ռու հեռաւոր աստղին արած հարցումով՝

- Բարի ճամփա՛, հիւրդ մեր հիւն.
- Եւ թէ տեսնես՝
- Մեզնից էսպէս
- Մի հարցում տուր հըզոր մահին՝
- Մարդու քանի՞
- Սերունդ կանի
- Մի հըրածեշտն աստղային:

Միւսը, գրուած յուլիսին, մի քառեակ
է՝ իր մտքի խորունկ թափանցումներից,
ինքնաճանաչման իմաստուն ընդհանրա-
ցումներից մէկը՝

- Տիեզերքում աստուածային մի ճամփորդ
- է իմ հոգին.
- Երկրից անցուոր, երկրի փառքին անհա-
- ղորդ է իմ հոգին.
- Հեռացել է ու վերացել մինչ աստղերը
- հեռաւոր,
- Վար մնացած մարդու համար արդէն
- խորթ է իմ հոգին:

1922-ի զեկտեմբերի 23-ին ծանր
հիւանդին տարան Մոսկուա: Մեծահմուտ
բժիշկների հսկողութեամբ մնաց Օստրո-

մովի անուան հիւանդանոցում մինչեւ
1923-ի մարտի 23-ը եւ Աշխէն ու Նուարդ
դուստրերի ներկայութեամբ աւանդեց հո-
գին:

Մենք մշտապէս պարտական ենք
Նուարդին, որ թղթին է յանձնել Հօր
մտքերը կեանքի նաեւ վերջին ամիսնե-
րին: Գրառումների վկայութեամբ թումա-
նեանը մի անհուն վիշտ է տարել իր հետ
եւ մի մեծ բաղձանք:

Իր հայրենիքի, իր ժողովրդի ճակա-
տագրի վիշտը. «Ժողովուրդը կոտորուած,
տեղահան եղած, ցրուած, հալածուած:
Հայկական Հարցը մի անգամ ընդմիշտ
կապուած է Ռուսաստանի հետ: Մեր մեծ
երազններից յետոյ ոչ միայն մինչեւ Ա-
րաքսի ամիսը հասանք, այլ նոյնիսկ էջ-
միածնի պատի տակերը» (յունուարի 12-
ի գրառում):

Եւ գրելու, ստեղծելու, ստեղծագործե-
լու անհասկելի կարօտն ու բաղձանքը.
«Ա՛խ, մի լաւանայի՛... Հիմա որ լաւա-
ցայ, էլ ոչ ոք չի պոկի ինձ իմ գրասե-
ղանից: Գարունքի հետ հէնց որ աչքերս
բացուեն՝ ինչե՛ր եմ թափելու, ինչե՛ր եմ
թափելու՝ հեքիաթների, լեգենդների հե-
ղեղ...» (փետրուարի 9-ի գրառում):

Տիեզերքի մեծ ճամփորդը հրաժեշտ
տուեց իր երկրային կեանքին՝ թողնելով
այնպիսի վիթխարի հոգեւոր հարստու-
թիւն, որ իր ժողովրդի սիրոյ ու հրճուան-
քի յաւերժական աղբիւրն է:

Նրա թողած գրական ժառանգութիւ-
նը սերունդներին պէտք է գրաւի ու հրա-
պուրի ոչ միայն գեղարուեստական ան-
մահ երկերով, այլեւ հայոց պատմական
ճակատագրի մեկնութիւններով՝ այնպիսի
խորքով ու ընդգրկումով, որին չի կարող
յաւակնել ոչ մի հայ գրող ու մտածող:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Նոյն դրուագը, մի փոքր այլ կերպ, իրենց յուշե-
րում պատմել են Վահան Թոթովեցը եւ Վարդ-
գէս Ահարոնեանը՝ Աւետիս Ահարոնեանի որ-
դին: Նրանք եւս այդ օրերին գտնուում էին Էջ-
միածնում:
- 2 1915-ի սեպտեմբերին Լոռում սպանուել էր բա-
նաստեղծի եղբայր Ռոստոմը, մուս թոյի յու-
նուարին ռազմաճակատում զոհուել էր Արտա-
շէս եղբայրը, որ իբրեւ սպայ ծառայում էր բանա-
կում:
- 3 Կուրգենայի մտաբերել. 1969-ին, Թումանեանի
100-ամեակի յոբելեանական օրերին, Առնո Բա-
բաջանեանը գրեց «Էլ աստղե՛ր, աստղե՛ր» երգը՝

- 4 Ի դէպ, Թումանեանի ծննդեան 100-ամեակի օրե-
րին այդ բանաստեղծութեան տեքստով գրեց մի
սքանչելի կանտատ, որ հնչում է օրհներգի պէս
վսեմ, ազդու, հանդիսատր (եւ արժէր, որ դա Հա-
յաստանի հիմնը լինէր): «Հայոց լեռներում» կան-
տատն էլ Էրգար Յովհաննիսեանը գրեց:
- 5 Միութիւններ՝ Այեքսանդրապոլի, Ախալցխայի,
Ախալքալակի, Գանձակի, Գողթնի, Ղազախ-
Շամշադնի, Ղարսի, Ղարաբաղի, Լոռու, Հիւ-
նախիջեանի, Նոր Բայազետի, Պարսկաստա-
նի, Փամբակի, Օսմայսու եւ Օուլաւերի: